



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

11 հուլիսի 2019թ. թիվ 451-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 57-Ա  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, հաշվի առնելով «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 09.07.2019թ. թիվ 058/167 գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի 2019թ. փետրվարի 14-ի «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 57-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) «Բուժքույրեր» մասում՝

ա. «Իմունոկանխարգելման կաբինետի բուժքույր» տողում «1.0» թիվը փոխարինել «2.0» թվով:

բ. «Ընդամենը» տողում «24.0» թիվը փոխարինել «25.0» թվով:

2) «Շտապ օգնություն» մասում «Վարորդ» բառը փոխարինել «Վարորդ-սանիտար» բառերով:

3) «Ընդհանուրը» տողում «192.25» թիվը փոխարինել «193.25» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

 Invalid signature



**ԱՐՄԵՆԻԱ**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. հուլիսի 11  
ք.Վանաձոր